41

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
Երևան - 1, Նալբանդյան փ. 104

«14» 04 2015թ. N: 11/371

ՀՀ վարչական դատարան,
դատավոր Ա. Ղազարյանին
Երևան, Գ. Նժդեհի 23

Հայցվոր՝ <<Հելսինկյան Քաղաքացիական
Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ>>
հասարակական կազմակերպության
ներկայացուցիչ Ա. Զալյանին
Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59

Պատասխանող՝ ՀՀ ազգային
անվտանգության ծառայություն
ք. Երևան, Նալբանդյան փողոց, 104

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԻ ՊԱՏԱՍԽԱՆ
<<Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ>> հասարակական կազմակերպությունն ընդդեմ ՀՀ ազգային անվտանգության ծառայության՝ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին

Ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածով ուղարկում եմ հայցադիմումի պատասխանը:

<<Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ>> հասարակական կազմակերպության նախագահ Արթուր Սաքունցը ՀՀ ազգային անվտանգության ծառայությունից (այսուհետ՝ ՀՀ ԱԱԾ) 26.01.2015թ. N Ե/2015-26.01/77 գրությամբ հայցել է տեղեկատվություն ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի N 303-ն որոշմամբ հաստատված մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրով սահմանված գործողությունների կատարման վերաբերյալ:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հարցմանը տրվել է պատասխան:

Հայցվոր կողմի ներկայացրած 1.1.2, 1.1.3, 1.1.5, 1.1.6 և 1.1.8. 1.1.9 կետերում նշված հարցերում հայցվող տեղեկատվության տրամադրումը պարտավորեցնելու հիմնավորումների վերաբերյալ հայտնում եմ.

Հայցվորի կողմից նշված Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի դրույթներն արտացոլվել են միակողմանի, քանի որ նույն հոդվածի 2-րդ մասում նշված է <<Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով>>: Հոդվածով նախատեսվում է տվյալ իրավունքի (այս դեպքում տեղեկատվության ստացման) սահմանափակում՝ օրենքով սահմանված դեպքերում: Ինչ վերաբերվում է հայցվոր կողմի նշած ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով նախատեսված իրավունքին, ապա ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածով նույնպես նախատեսված է նմանատիպ սահմանափակում, մասնավորապես՝ <<Մարդու և քաղաքացու՝ Սահմանադրության 23-25, 27, 28-30, 32-րդ հոդվածի երրորդ մասով ամրագրված հիմնական իրավունքներն և ազատությունները կարող են սահմանապակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների պատվի և բարի համբավի պաշտպանության համար>>:

Նշված սահմանափակումներն իրենց օրենսդրական ամրագրումն են ստացել <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքում, որտեղ սահմանված են տեղեկատվության տրամադրման մերժման հիմքերը՝ տվյալ դեպքում պատասխանները պարունակում են ծառայողական գաղտնիք և համաձայն <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդված 1-ին մասի չեն կարող տրամադրվել:

Հայցվոր կողմի այն դիտարկմանը, որում նշված կետերով հայցվող տեղեկատվությունը կազմակերպչական և ընթացակարգային հարցեր են և չեն կարող ծառայողական գաղտնիք լինել և դրանց հրապարակայնությունը ՀՀ անվտանգությանը չի կարող վնաս հասցնել որևէ հիմնավորվածություն չունի: Նշված տեղեկատվությունը համաձայն <<Պետական և ծառայողական գաղտնիքի մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի <<ա>> կետի և Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մարտի 13-ի N 173 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկի 32-րդ կետով սահմանված (օպերատիվ հետախուզական գործունեության ուժեր, միջոցներ) պետական գաղտնիք հանդիսացող տեղեկությունների մասն են կազմում՝ այսինքն համաձայն <<Պետական և ծառայողական գաղտնիքի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն հանդիսանում են ծառայողական գաղտնիք և դրա հրապարակայնացումն

անթույլատրելի է: Բացի այդ ՀՀ ազգային անվտանգության ծառայության կառուցվածքն ունի գաղտնիության համապատասխան դրոշմագիր և դրանում ընդգրկված որոշ մարմինների ու դրանց ստորաբաժանումների վերաբերյալ տվյալները (այդ թվում՝ անվանումները) ծառայողական գաղտնիք են պարունակում: Հետևաբար նշված կետերով հայցվող տեղեկատվությունը չի կարող տրամադրվել:

Այսպիսով, ՀՀ ԱԱԾ պատասխանը նշված կետերով հայցվող տեղեկատվության տրամադրումը մերժելու վերաբերյալ համապատասխանում է վերը թվարկված իրավանորմերի պահանջներին և նշված ապացույցների հիմքով հիմնավոր է, իսկ հայցվորի ներկայացուցչի պահանջն անհիմն ու անընդունելի է: Ելնելով վերոգրյալից դատարանից խնդրում եմ վերը նշված մասով վարչական գործով հայցը մերժել՝ անհիմն լինելու պատճառով:

Ինչ վերաբերում է 1.1.7 կետով հայցվող առաջարկության օրինակի տրամադրմանը, ապա ՀՀ ԱԱԾ պատասխանում գրեթե տառացի շարադրվել է այն և այդ պատճառով գրության օրինակ չի տրամադրվել, անհրաժեշտության դեպքում կարող է տրամադրվել գրության պատճեն:

1.1.10 կետով նշված հարցի պատասխանը չի տրամադրվել տեխնիկական վրիպակի պատճառով:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում սենյակն անչափահասների հարցաքննության համար հատուկ կահավորվում է ըստ անհրաժեշտության:

ՀՀ վարչական դատարանի վարչական գործով հայցադիմումը վարույթ ընդունելու մասին 18.03.2015. որոշումը ՀՀ ԱԱԾ ստացվել է 01.04.2015թ.:

Կից դատարանին ներկայացնում եմ

1. ՀՀ ԱԱԾ տնօրենի 14.04.2015թ. N 11/370 լիազորագիրը՝ 1 թերթից,

2. սույն պատասխանը և լիազորագրի պատճենը հայցվորին առաքելու մասին փոստային անդորրագրի պատճենը՝ 1 թերթից:

ՀՀ ԱԱԾ ներկայացուցիչ՝ Մ. Մկրտչյան

ԿԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ

Երևան-1, Նալբանդյան փ. 104

«14» 04 2015թ. № 11/370

ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

Ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածով՝ լիազորում եմ ՀՀ ԱԱԾ աշխատակից Մխիթար Մկրտչյանին հանդես գալու ՀՀ դատարաններում որպես ՀՀ ազգային անվտանգության ծառայության ներկայացուցիչ՝ ըստ հայցի <<Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ>> հասարակական կազմակերպության ընդդեմ ՀՀ ազգային անվտանգության ծառայության՝ հայցով տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին ՈՎԴ-0726/05/15 վարչական գործը քննելիս:

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ